ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին
(21 դեկտեմբերի 1965թ.)

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները,

համարելով, որ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությունը հիմնված է բոլոր մարդկանց ներհատուկ արժանապատվության և հավասարության սկզբունքների վրա և որ Կազմակերպության անդամ բոլոր պետությունները պարտավորվել են, համագործակցելով Միավորված ազգերի կազմակերպության հետ, ձեռնարկել համատեղ և առանձին գործողություններ՝ իրականացնելու Միավորված ազգերի կազմակերպության նպատակներից մեկը, այն է՝ բոլորի համար, առանց ռասայի, սեռի, լեզվի ու կրոնի հիմքով տարբերակման խրախուսելու և զարգացնելու մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքն ու դրանց պահպանումը,

համարելով, որ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն ազդարարում է, որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ և իրենց արժանապատվությամբ ու իրավունքներով հավասար և որ յուրաքանչյուր մարդ օժտված է այդ Հռչակագրում ամրագրված իրավունքներով ու ազատություններով՝ առանց որևէ տարբերակման, մասնավորապես, ռասայի, մաշկի գույնի կամ ազգային ծագման հիմքով,

համարելով, որ բոլորը հավասար են օրենքի առջև և ունեն ամեն խտրականությունից ու խտրականության հրահրումից օրենքով հավասարապես պաշտպանվելու իրավունք,

համարելով, որ Միավորված ազգերի կազմակերպությունը դատապարտել է գաղութատիրությունը և դրա հետ կապված սեգրեգացիայի ու խտրականության պրակտիկան, ինչ ձևով և որտեղ էլ այն դրսևորվելիս լինի, և որ Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին 1960թ. դեկտեմբերի 14-ի հռչակագիրը (Գլխավոր ասամբլեայի 1514 (15) բանաձև) հաստատել և հանդիսավոր կերպով ազդարարել է այդ պրակտիկային անհապաղ ու անվերապահորեն վերջ տալու անհրաժեշտությունը,

համարելով, որ Ռասայական խտրականության բոլոր ձևերը վերացնելու մասին Միավորված ազգերի կազմակերպության 1963թ. նոյեմբերի 20-ի հռչակագիրը (Գլխավոր ասամբլեայի 1904 (18) բանաձև) հաստատում է ողջ աշխարհում ռասայական խտրականությունն իր բոլոր ձևերով ու դրսևորումներով շուտափույթ վերացնելու և մարդու անձի արժանապատվության գիտակցումն ու հարգանքն ապահովելու անհրաժեշտությունը,

համոզված լինելով, որ ռասայական տարբերության վրա հիմնված գերազանցության ցանկացած տեսություն գիտական առումով կեղծ է, բարոյականության տեսանկյունից՝ դատապարտելի, իսկ սոցիալական առումով՝ անարդարացի ու վտանգավոր, և որ ռասայական խտրականության համար արդարացում լինել չի կարող թե՛ տեսության մեջ, թե՛ պրակտիկայում,

հաստատելով, որ ռասայի, մաշկի գույնի կամ էթնիկական ծագման հատկանիշով մարդկանց միջև խտրականությունը խոչընդոտում է ազգերի միջև բարեկամական ու խաղաղ հարաբերություններին և կարող է հանգեցնել ժողովուրդների միջև խաղաղության ու անվտանգության, ինչպես նաև անգամ նույն պետության ներսում անձանց ներդաշնակ համագործակցության խախտմանը,

համոզված լինելով, որ ռասայական անջրպետների գոյությունը հակասում է մարդկային ցանկացած հասարակության իդեալներին,

անհանգստացած լինելով աշխարհի որոշ շրջաններում դեռևս առկա ռասայական խտրականության դրսևորումներից և ռասայական գերազանցության կամ ատելու-

թյան վրա հիմնված պետական այնպիսի քաղաքականությունից, ինչպիսին են ապարտեիդը, սեգրեգացիան կամ անջատողականությունը,

լի վճռականությամբ՝ ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները շուտափույթ վերացնելու համար ռասայական խտրականությունն իր բոլոր ձևերով ու դրսևորումներով և կանխարգելելու ու վերացնելու ռասիստական տեսություններն ու պրակտիկան՝ ռասաների միջև փոխըմբռնմանը նպաստելու և ռասայական սեգրեգացիայի ու ռասայական խտրականության բոլոր ձևերից ազատ միջազգային հանրություն ստեղծելու նպատակով,

ուշադրության առնելով Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից 1958թ. ընդունված Զբաղվածության և աշխատանքի բնագավառում խտրականության մասին կոնվենցիան և Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության կողմից 1960թ. ընդունված Կրթության բնագավառում խտրականությունը վերացնելու մասին կոնվենցիան,

ցանկանալով իրականացնել Միավորված ազգերի կազմակերպության՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերը վերացնելու մասին հռչակագրում ամրագրված սկզբունքները և այդ նպատակով ապահովել գործնական միջոցառումների շուտափույթ իրագործումը,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

Մաս 1

Հոդված 1

1. Սույն Կոնվենցիայում «ռասայական խտրականություն» հասկացությունը նշանակում է ռասայի, մաշկի գույնի, ցեղային, ազգային կամ էթնիկական ծագման հատկանիշների հիմքով ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որոնք ունեն քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները չեղյալ հայտարարելու կամ դրանց ճանաչումը, օգտագործումը կամ իրականացումը նվազեցնելու նպատակ կամ հանգեցնում են նման հետևանքների:

2. Սույն Կոնվենցիան չի կիրառվում այն տարբերակումների, բացառությունների կամ նախապատվությունների նկատմամբ, որոնք սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները սահմանում են քաղաքացիների և քաղաքացի չհանդիսացող անձանց միջև:

3. Սույն Կոնվենցիայում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես մասնակից պետությունների ազգային պատկանելությանը, քաղաքացիությանը կամ հպատակագրմանը վերաբերող օրենսդրության դրույթների վրա որևէ կերպ ազդեցություն ունեցող, պայմանով, որ նման դրույթները խտրական չեն որևէ որոշակի ազգության նկատմամբ:

4. Հատուկ միջոցառումները, որոնք կիրառվում են, բացառապես, ռասայական կամ էթնիկական այնպիսի որոշակի խմբերի կամ անհատների համապատասխան առաջընթացն ապահովելու նպատակով, որոնք կարիք ունեն նման խմբերի կամ անհատների կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հավասար օգտագործումն ու իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ պաշտպանության, չեն դիտվում որպես ռասայական խտրականություն, պայմանով, այնուամենայնիվ, որ այդ միջոցառումները չեն հանգեցնում ռասայական տարբեր խմբերի համար առանձին իրավունքների պահպանմանը և չեն շարունակվի այն նպատակներին հասնելուց հետո, հանուն որոնց դրանք կիրառվել էին:

Հոդված 2

1. Մասնակից պետությունները դատապարտում են ռասայական խտրականությունն ու պարտավորվում են անհապաղ, բոլոր հնարավոր եղանակներով վարել ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման քաղաքականություն և նպաստել բոլոր ռասաների միջև փոխըմբռնմանը. այդ նպատակով՝

(ա) յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է չներգրավվել ռասայական խտրականության որևէ գործողության կամ պրակտիկայի մեջ՝ ընդդեմ անձանց, անձանց խմբերի կամ հաստատությունների, և երաշխավորել, որ պետական բոլոր մարմիններն ու հաստատությունները, ինչպես ազգային, այնպես էլ տեղական, կգործեն այդ պարտավորությանը համապատասխան,

(բ) յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է չխրախուսել, չպաշտպանել և չաջակցել որևէ անձի կամ կազմակերպության կողմից իրականացվող ռասայական խտրականության,

(գ) յուրաքանչյուր մասնակից պետություն ազգային ու տեղական մասշտաբով ձեռնարկում է արդյունավետ միջոցներ՝ կառավարության քաղաքականության վերանայման, ինչպես նաև խտրականության առաջացմանը կամ հավերժացմանը հանգեցնող ցանկացած օրենք և ենթաօրենսդրական ակտ փոփոխելու, վերացնելու կամ չեղյալ հայտարարելու համար,

(դ) յուրաքանչյուր մասնակից պետություն, օգտագործելով բոլոր համապատասխան, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում, օրենսդրական, միջոցները, արգելում կամ վերացնում է ցանկացած անձի, խմբի կամ կազմակերպության կողմից իրականացվող ռասայական խտրականությունը,

(ե) յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է, համապատասխան դեպքերում, խրախուսել ինտեգրացիոն բազմառասայական կազմակերպություններն ու շարժումները և ռասաների միջև անջրպետների վերացմանն ուղղված այլ միջոցները, և չպաշտպանել ոչինչ, ինչը նպաստում է ռասայական բաժանման խորացմանը:

2. Մասնակից պետությունները սոցիալական, տնտեսական, մշակութային և այլ բնագավառներում ձեռնարկում են, երբ հանգամանքները պահանջում են, հատուկ ու կոնկրետ միջոցներ՝ ապահովելու համար ռասայական որոշ խմբերի կամ այդ խմբերին պատկանող անձանց պատշաճ զարգացումն ու պաշտպանությունը՝ նրանց կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիարժեք ու հավասար օգտագործումը երաշխավորելու նպատակով: Այդպիսի միջոցները ոչ մի դեպքում չպետք է հանգեցնեն ռասայական տարբեր խմբերի համար անհավասար կամ հատուկ իրավունքների պահպանմանը այն նպատակների իրագործումից հետո, հանուն որոնց դրանք ձեռնարկված են եղել:

Հոդված 3

Մասնակից պետությունները, մասնավորապես, դատապարտում են ռասայական սեգրեգացիան ու ապարտեիդը և պարտավորվում են իրենց իրավազորության ներքո գտնվող տարածքներում կանխարգելել, արգելել ու վերացնել նման բնույթի ցանկացած պրակտիկա:

Հոդված 4

Մասնակից պետությունները դատապարտում են ցանկացած քարոզչություն և բոլոր այն կազմակերպություններին, որոնք հիմնված են մի ռասայի կամ մաշկի որոշակի գույն կամ էթնիկական ծագում ունեցող անձանց խմբի գերազանցության գաղափարների կամ տեսությունների վրա կամ որոնք փորձում են արդարացնել կամ խրախուսել ռասայական ատելությունն ու խտրականությունը, ինչ ձևով էլ որ դրանք դրսևորվելիս լինեն. նրանք պարտավորվում են ձեռնարկել անհապաղ ու դրական միջոցներ՝ ուղղված նման խտրականության ցանկացած հրահրում կամ իրականացում վերացնելուն

և, այդ նպատակով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված սկզբունքների ու սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածում շարադրված իրավունքներին համապատասխան, այլ միջոցների թվում՝

(ա) օրենքով պատժելի հանցանք են համարում ռասայական գերազանցության կամ ռասայական ատելության վրա հիմնված գաղափարների տարածումը, ռասայական խտրականության հրահրումը, ինչպես նաև ցանկացած ռասայի կամ մաշկի այլ գույն կամ էթնիկական այլ ծագում ունեցող անձանց խմբի դեմ ուղղված բռնության գործողությունները կամ դրանց հրահրումը, ինչպես նաև ռասիստական գործունեությանն օգնություն տրամադրելը, ներառյալ՝ նման գործունեության ֆինանսավորումը,

(բ) հակաօրինական են հայտարարում և արգելում են այն կազմակերպությունները, ինչպես նաև կազմակերպված ու ցանկացած այլ քարոզչական գործունեություն, որոնք խրախուսում ու հրահրում են ռասայական խտրականություն, և մասնակցությունը նման կազմակերպություններին կամ գործունեությանը համարում են օրենքով պատժելի հանցագործություն,

(գ) պետական իշխանության ազգային կամ տեղական մարմիններին կամ պետական հաստատություններին չեն թույլատրում խրախուսել կամ հրահրել ռասայական խտրականություն:

Հոդված 5

Սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածում շարադրված պարտավորություններին համապատասխան, մասնակից պետությունները պարտավորվում են արգելել ու վերացնել ռասայական խտրականությունն իր բոլոր ձևերով և ապահովել յուրաքանչյուրի իրավահավասարությունն օրենքի առջև՝ առանց ռասայի, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկական ծագման տարբերակման, հատկապես, հետևյալ իրավունքների իրականացման կապակցությամբ.

(ա) դատարանի և արդարադատություն իրականացնող մյուս բոլոր մարմինների առջև հավասարության իրավունքի,

(բ) անձնական անվտանգության և բռնությունից կամ մարմնական վնասվածքներից պետության կողմից պաշտպանության իրավունքի՝ անկախ այն բանից, դրանք դրսևորվել են պետական պաշտոնյաների, թե առանձին անձանց կամ հաստատությունների կողմից,

(գ) քաղաքական իրավունքների կապակցությամբ, մասնավորապես, ընտրությունների մասնակցելու, ընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա ընտրելու և ընտրվելու իրավունքի, երկրի կառավարմանը, ինչպես նաև հանրային գործերին ցանկացած մակարդակով մասնակցելու իրավունքի և պետական ծառայության անցնելու հավասար հնարավորության իրավունքի,

(դ) քաղաքացիական այլ իրավունքների կապակցությամբ, մասնավորապես՝

(i) պետության սահմանների ներսում տեղաշարժի և բնակության ազատության իրավունքի,

(ii) ցանկացած, ներառյալ իր սեփական, երկրից հեռանալու և իր սեփական երկիրը վերադառնալու իրավունքի,

(iii) քաղաքացիության իրավունքի,

(iv) ամուսնանալու և ամուսին ընտրելու իրավունքի,

(v) ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ սեփականության իրավունքի,

(vi) ժառանգման իրավունքի,

(vii) մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի,

(viii) համոզմունքների ազատության և ազատ արտահայտվելու իրավունքի,

(ix) խաղաղ հավաքների և միավորումներ կազմելու ազատության իրավունքի,

(ե) տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կապակցությամբ, մասնավորապես՝

(i) աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության, աշխատանքի արդար և նպաստավոր պայմանների, գործազրկությունից պաշտպանվածության, հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության, արդար և բավարար վարձատրության իրավունքի,

(ii) արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքի,

(iii) բնակարանի իրավունքի,

(iv) առողջության, բժշկական օգնության, սոցիալական ապահովության և սոցիալական սպասարկման իրավունքի,

(v) կրթության և մասնագիտական նախապատրաստման իրավունքի,

(vi) մշակութային կյանքին հավասար մասնակցության իրավունքի,

(q) ցանկացած վայր կամ հասարակական սպասարկման համար նախատեսված ցանկացած օբյեկտ, ինչպես, օրինակ, տրանսպորտ, հյուրանոցներ, ռեստորաններ, սրճարաններ, թատրոններ ու զբոսայգիներ, մուտք գործելու իրավունքի:

Հոդված 6

Մասնակից պետություններն իրավասու ներպետական դատարանների և պետական այլ հաստատությունների միջոցով իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի համար երաշխավորում են արդյունավետ պաշտպանություն և խախտված իրավունքների վերականգնում ընդդեմ ռասայական խտրականության ցանկացած գործողության, որը սույն Կոնվենցիային հակառակ խախտում է տվյալ անձի իրավունքներն ու հիմնարար ազատությունները, ինչպես նաև՝ այդ ատյաններում նման խտրականության հետևանքով պատճառված ցանկացած վնասի արդար և համարժեք հատուցում կամ բավարարում ստանալու իրավունքը:

Հոդված 7

Մասնակից պետությունները պարտավորվում են անհապաղ ու արդյունավետ միջոցներ ձեռնարկել, մասնավորապես, դասավանդման, կրթության, մշակույթի և տեղեկատվության բնագավառներում ռասայական խտրականության հանգեցնող նախապաշարմունքների դեմ պայքարի, ազգերի և ռասայական կամ էթնիկական խմբերի միջև փոխըմբռնման, հանդուրժողականության ու բարեկամության խրախուսման, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Միավորված ազգերի կազմակերպության հռչակագրի և սույն Կոնվենիայի նպատակներն ու սկզբունքները հանրամատչելի դարձնելու նպատակով:

Մաս 2

Հոդված 8

1. Ստեղծվում է Ռասայական խտրականության վերացման կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե)՝ կազմված բարոյական բարձր նկարագիր ունեցող և ճանաչված անաչառությամբ օժտված փորձագետներից, որոնց ընտրում են մասնակից պետություններն իրենց քաղաքացիներից և որոնք իրենց պարտականություններն իրականացնում են անձնապես, ընդ որում հաշվի է առնվում արդարացի աշխարհագրական բաշխումն ու քաղաքակրթության տարբեր ձևերի, ինչպես նաև իրավական գլխավոր համակարգերի ներկայացուցչությունը:

2. Կոմիտեի անդամներն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ, մասնակից պետությունների առաջադրած անձանց ցուցակից: Յուրաքանչյուր մասնակից իր քաղաքացիներից կարող է առաջադրել մեկ թեկնածու:

3. Սկզբնական ընտրություններն անցկացվում են սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամիս անց: Յուրաքանչյուր ընտրության օրվանից առնվազն երեք ամիս առաջ Գլխավոր քարտուղարն անդամ պետություններին հասցեագրած նամակով նրանց հրավիրում է երկու ամսվա ընթացքում առաջադրելու իրենց թեկնածուներին: Գլխավոր քարտուղարը պատրաստում է այդ կարգով առաջադրված բոլոր անձանց այբբենական ցուցակը՝ նշելով նրանց առաջադրած մասնակից պետությունները, և այն ներկայացնում Կոնվենցիայի մասնակից պետություններին:

4. Կոմիտեի անդամների ընտրություններն անցկացվում են Կոնվենցիայի մասնակից պետությունների նիստում, որ հրավիրում է Գլխավոր քարտուղարը Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում: Այդ նիստում, որում քվորում ձևավորում է մասնակից պետությունների երկու երրորդը, Կոմիտեի ընտրված անդամներ են համարվում այն թեկնածուները, որոնք ստանում են ձայների առավելագույն քանակը և Կոնվենցիայի մասնակից պետությունների՝ ներկա ու քվեարկությանը մասնակցող ներկայացուցիչների ձայների բացարձակ մեծամասնությունը:

5. (ա) Կոմիտեի անդամներն ընտրվում են չորս տարով, սակայն առաջին ընտրություններում ընտրված ինն անդամների լիազորություններն ավարտվում են երկամյա ժամկետի ավարտին: Առաջին ընտրություններից անմիջապես հետո այդ ինն անդամների անունները որոշում է Կոմիտեի նախագահը՝ վիճակահանությամբ,

(բ) չնախատեսված թափուր տեղերը լրացնելու համար Կոնվենցիայի անդամ պետությունը, որի փորձագետն այլևս Կոմիտեի անդամ չէ, իր քաղաքացիներից նշանակում է այլ փորձագետի՝ Կոմիտեի հավանությունն ստանալու պայմանով:

6. Մասնակից պետությունները պատասխանատու են Կոմիտեի անդամների ծախսերը ծածկելու համար՝ Կոմիտեում նրանց պարտականությունների կատարման ժամանակահատվածում:

Հոդված 9

Մասնակից պետությունները պարտավորվում են Կոմիտեի կողմից քննարկման համար Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ներկայացնել զեկույց իրենց ընդունած օրենսդրական, դատական, վարչական կամ այլ միջոցների մասին, որոնց օգնությամբ կենսագործվում են սույն Կոնվենցիայի դրույթները՝

(ա) տվյալ պետության համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում, և

(բ) հետագայում յուրաքանչյուր երկու տարին մեկ և ամեն անգամ, երբ դա պահանջում է Կոմիտեն: Կոմիտեն կարող է Կոնվենցիայի մասնակից պետություններից պահանջել լրացուցիչ տեղեկատվություն:

2. Ամեն տարի Կոմիտեն Գլխավոր քարտուղարի միջոցով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեային զեկույց է ներկայացնում իր գործունեության մասին և կարող է ներկայացնել առաջարկություններ ու ընդհանուր հանձնարարականներ՝ հիմնված մասնակից պետություններից ստացված զեկույցների ու տեղեկատվության ուսումնասիրման վրա: Նման առաջարկություններն ու ընդհանուր հանձնարարականները հաղորդվում են Գլխավոր ասամբլեային Կոնվենցիայի մասնակից պետությունների դիտողությունների հետ մեկտեղ, եթե այդպիսիները կան:

Հոդված 10

1. Կոմիտեն ընդունում է իր կանոնակարգը:

2. Կոմիտեն ընտրում է իր պաշտոնատար անձանց երկու տարի ժամկետով:

3. Կոմիտեի քարտուղարությունն ապահովվում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից:

4. Կոմիտեի նիստերը, սովորաբար, անցկացվում են Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում:

Հոդված 11

1. Եթե որևէ մասնակից պետություն գտնում է, որ մյուս մասնակից պետությունը չի կատարում սույն Կոնվենցիայի դրույթները, ապա այն կարող է այդ մասին տեղյակ պահել Կոմիտեին: Կոմիտեն այնուհետև այդ մասին հաղորդումը հանձնում է շահագրգիռ մասնակից պետությանը: Ծանուցում ստացած պետությունը երեք ամսվա ընթացքում Կոմիտեին է ներկայացնում տվյալ հարցը լուսաբանող գրավոր բացատրություններ կամ հայտարարություն և իր կողմից ձեռնարկվելիք միջոցները:

2. Եթե հարցը երկու կողմերին բավարարող կարգավորում չի ստանում ո՛չ երկկողմ բանակցությունների, ո՛չ նրանց համար մատչելի այլ ճանապարհով, ապա ծանուցումն ստացած պետության կողմից սկզբնական ծանուցումն ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում այդ երկու պետություններից ցանկացածն իրավունք ունի վերստին այդ հարցը հանձնել Կոմիտեի քննությանը՝ Կոմիտեին, ինչպես նաև մյուս պետությանը համապատասխան ծանուցում ներկայացնելու միջոցով:

3. Կոմիտեն սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան իրեն հանձնված հարցը քննարկում է այն բանից հետո, երբ հավաստիանում է, որ, միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներին համապատասխան, օգտագործվել և սպառվել են իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները: Այս դրույթը չի կարող կիրառվել, եթե իրավական պաշտպանության տրամադրումն անհիմն կերպով ձգձգվում է:

4. Իր քննարկմանը հանձնված ցանկացած հարցի առթիվ Կոմիտեն կարող է շահագրգիռ մասնակից պետություններից պահանջել գործին առնչվող ցանկացած տեղեկատվություն:

5. Եթե Կոմիտեում քննարկվում է սույն հոդվածի դրույթներից բխող որևէ հարց, ապա շահագրգիռ մասնակից պետություններն իրավունք ունեն հարցի քննարկմանը մասնակցելու համար ուղարկել իրենց ներկայացուցիչներին՝ առանց տվյալ հարցի քննարկման ընթացքում քվեարկելու իրավունք ունենալու:

Հոդված 12

1. (ա) Այն բանից հետո, երբ Կոմիտեն ստանում և մանրամասնորեն ստուգում է իր կողմից անհրաժեշտ համարվող ողջ տեղեկատվությունը, նախագահը նշանակում է Հատուկ հաշտարար հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ կազմված 5 անդամից, որոնք կարող են լինել կամ չլինել Կոմիտեի անդամներ: Կոմիտեի անդամները նշանակվում են վեճին մասնակից կողմերի միաձայն համաձայնությամբ, և Հանձնաժողովը սույն Կոնվենցիայի դրույթների պահպանման հիման վրա տվյալ հարցի սիրահոժար կարգավորման նպատակով շահագրգիռ պետություններին է տրամադրում իր բարի ծառայությունները:

(բ) Եթե Կոմիտեի ողջ կազմի կամ նրա մի մասի կապակցությամբ վեճի կողմեր հանդիսացող մասնակից պետությունների միջև երեք ամսվա ընթացքում համաձայնություն ձեռք չի բերվում, ապա Հանձնաժողովի այն անդամները, որոնց նշանակման վերաբերյալ համաձայնություն ձեռք չի բերվել վեճի մասնակից պետությունների միջև, ընտրվում են Կոմիտեի կողմից՝ նրա անդամներից, փակ քվեարկությամբ, ձայների երկու երրորդի մեծամասնությամբ:

2. Հանձնաժողովի անդամներն իրենց պարտականությունները կատարում են անձնապես: Նրանք չպետք է լինեն վեճի կողմ հանդիսացող մասնակից պետության կամ Կոնվենցիային չմասնակցող պետության քաղաքացիներ:

3. Հանձնաժողովն ընտրում է իր նախագահին և ընդունում է իր կանոնակարգը:

4. Հանձնաժողովի նիստերը սովորաբար անցկացվում են Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում և, Հանձնաժողովի որոշմամբ, ցանկացած այլ վայրում:

5. Քարտուղարությունը, որն ապահովում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան, սպասարկում է նաև Հանձնաժողովին, եթե պետությունների միջև ծագած վեճը հանգեցնում է Հանձնաժողովի ստեղծման:

6. Վեճի կողմեր հանդիսացող մասնակից պետությունները հավասարապես կրում են Հանձնաժողովի անդամների ծախսերը՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից ներկայացվող նախահաշվին համապատասխան:

7. Գլխավոր քարտուղարն իրավունք ունի վճարել Հանձնաժողովի անդամների ծախսերը, եթե դա անհրաժեշտ է, մինչև վեճի կողմեր հանդիսացող մասնակից պետությունների կողմից այդ ծախսերի փոխհատուցումը սույն հոդվածի 6-րդ կետին համապատասխան:

8. Կոմիտեի ստացած և ուսումնասիրած տեղեկատվությունը տրամադրվում է Հանձնաժողովին, և Հանձնաժողովը կարող է շահագրգիռ պետություններին առաջարկել ներկայացնելու գործին առնչվող ցանկացած տեղեկատվություն:

Հոդված 13

1. Երբ Հանձնաժողովն ամբողջությամբ քննության է առել հարցը, այն նախապատրաստում և Կոմիտեի նախագահին է ներկայացնում կողմերի միջև վեճի փաստին վերաբերող բոլոր հարցերին առնչվող իր եզրակացությունները բովանդակող զեկույց և այնպիսի հանձնարարականներ, որոնք ինքն անհրաժեշտ է համարում վեճի լուծման համար:

2. Կոմիտեի նախագահը Հանձնաժողովի զեկույցն ուղարկում է վեճին մասնակից յուրաքանչյուր պետության: Երեք ամսվա ընթացքում այդ պետությունները Կոմիտեի նախագահին հայտնում են՝ համաձայն են արդյոք իրենք Հանձնաժողովի զեկույցում բովանդակված առաջարկություններին:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված ժամանակահատվածից հետո Հանձնաժողովի նախագահը Հանձնաժողովի զեկույցը և շահագրգիռ մասնակից պետությունների հայտարարություններն ուղարկում է Կոնվենցիային մասնակից մյուս պետություններին:

Հոդված 14

1. Մասնակից պետությունը ցանկացած ժամանակ կարող է հայտարարել, որ ինքը ճանաչում է Կոմիտեի իրավասությունը՝ իր իրավազորության սահմաններում ընդունելու և քննության առնելու հաղորդումներ առանձին անձանցից կամ անձանց խմբերից, որոնք պնդում են, թե իրենք տվյալ մասնակից պետության կողմից սույն Կոնվենցիայում ամրագրված որևէ իրավունքի խախտման զոհ են: Կոմիտեն չի ընդունում որևէ հաղորդում, եթե այն վերաբերում է Կոնվենցիայի՝ այդպիսի հայտարարություն չարած մասնակից պետությանը:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված հայտարարություն արած ցանկացած մասնակից պետություն կարող է հիմնել կամ նշել իր ներպետական իրավական համակարգի շրջանակներում գործող մարմին, որն իրավասու կլինի ընդունելու և իր իրավազորության սահմաններում քննության առնելու այն առանձին անձանց կամ անձանց խմբերի գանգատները, որոնք հայտարարում են, թե իրենք սույն Կոնվենցիայում ամրագրված իրավունքներից որևէ մեկի խախտման զոհ են, և որոնք սպառել են իրավական պաշտպանության տեղական մյուս մատչելի միջոցները:

3. Սույն հոդվածի առաջին կետին համապատասխան արված հայտարարությունը, ինչպես նաև սույն հոդվածի երկրորդ կետին համապատասխան հիմնված կամ նշված ցանկացած մարմնի անվանումը համապատասխան մասնակից պետության կողմից ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրանց պատճեններն առաքում է մյուս մասնակից պետություններին: Հայտարարությունը կարող է ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարվել այդ մասին

Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով, սակայն այդ չեղյալ հայտարարումը չի անդրադառնում այն հաղորդումների վրա, որոնք քննության են առնվում Կոմիտեի կողմից:

4. Գանգատների ցուցակը կազմում է սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան հիմնված կամ նշված մարմինը, իսկ այդ ցուցակի հաստատված պատճեններն ամեն տարի համապատասխան ուղիներով հանձնվում են Գլխավոր քարտուղարին, ընդսմին դրանց բովանդակությունը ենթակա չէ հրապարակման:

5. Այն դեպքում, երբ գանգատարկուն բավարարված չէ սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան հիմնված կամ նշված մարմնի գործողություններով, այն իրավունք ունի վեց ամսվա ընթացքում տվյալ հարցը հանձնել Կոմիտեին:

6. (ա) Կոմիտեն իրեն հանձնված ցանկացած հաղորդում խորհրդապահական կարգով ներկայացնում է Կոնվենցիայի որևէ դրույթի խախտման մեջ մեղադրվող մասնակից պետության ուշադրությանը, սակայն համապատասխան անձի կամ անձանց խմբի ինքնությունը չի բացահայտվում առանց նրա կամ նրանց համաձայնության: Կոմիտեն չի ընդունում անանուն հաղորդումներ:

(բ) Ստացած պետությունը երեք ամսվա ընթացքում Կոմիտե է ներկայացնում այդ հարցը լուսաբանող գրավոր բացատրություններ կամ հայտարարություններ և այն միջոցները, որոնք կարող էին կիրառվել այդ պետության կողմից:

7. (ա) Կոմիտեն հաղորդումները քննության է առնում՝ հաշվի առնելով շահագրգիռ մասնակից պետության և գանգատարկուի կողմից իրեն տրամադրված ողջ տեղեկատվությունը: Կոմիտեն քննության չի առնում որևէ գանգատարկուի հաղորդում, քանի դեռ չի հավաստիանում, որ գանգատարկուն սպառել է իրավական պաշտպանության բոլոր ներպետական մատչելի միջոցները: Այդ կանոնը, սակայն, չի գործում այն դեպքում, երբ այդ միջոցների կիրառումն անհիմն կերպով ձգձգվում է:

(բ) Կոմիտեն իր առաջարկություններն ու հանձնարարականները, եթե այդպիսիք կան, ուղարկում է շահագրգիռ մասնակից պետությանն ու գանգատարկուին:

8. Կոմիտեն իր ամենամյա զեկույցում ընդգրկում է այդ հաղորդումների ամփոփագիրը և, անհրաժեշտության դեպքում, շահագրգիռ մասնակից պետությունների բացատրությունների ու հայտարարությունների համառոտ շարադրանքը, ինչպես նաև իր իսկ առաջարկություններն ու հանձնարարականները:

9. Կոմիտեն իրավասու է սույն հոդվածով նախատեսված գործառույթներն իրականացնելու միայն այն դեպքում, երբ Կոնվենցիայի առնվազն տասը մասնակից պետություններ սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան հայտարարություններ են արել:

Հոդված 15

1. Մինչև Գլխավոր ասամբլեայի 1960թ. դեկտեմբերի 14-ի 1514 (15) բանաձևում բովանդակվող Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախության շնորհելու մասին հռչակագրի նպատակների իրագործումը, սույն Կոնվենցիայի դրույթները ոչ մի կերպ չեն սահմանափակում գանգատներ ներկայացնելու՝ միջազգային այլ փաստաթղթերով կամ Միավորված ազգերի կազմակերպության և նրա մասնագիտացված հաստատությունների կողմից այդ ժողովուրդներին տրամադրված իրավունքը:

2. (ա) Սույն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան հիմնված Կոմիտեն գանգատների պատճեններն ստանում է Միավորված ազգերի կազմակերպության այն մարմիններից, որոնք զբաղվում են սույն Կոնվենցիայի սկզբունքներին ու նպատակներին անմիջականորեն առնչվող հարցերով, և նրանց է ներկայացնում այդ գանգատների վերաբերյալ իր կարծիքներն ու հանձնարարականները խնամարկյալ և ինքնակառավարում չունեցող տարածքների և բոլոր այն տարածքների բնակիչներից ստացված գանգատները քննության առնելիս, որոնց վերաբերյալ, սույն Կոնվենցիայով նախատեսված հարցերի առնչությամբ, կիրառվում է 1514 (15) բանաձևը և որոնք քննության են առնչվում այդ մարմինների կողմից:

(բ) Կոմիտեն Միավորված ազգերի կազմակերպության իրավասու մարմիններից ստանում է կառավարող տերությունների կողմից սույն կետի (ա) ենթակետում հիշատակված տարածքներում իրագործվող օրենսդրական, դատական, վարչական և սույն Կոնվենցիայի սկզբունքներին ու նպատակներին անմիջականորեն առնչվող այլ միջոցառումների վերաբերող զեկույցների օրինակները, ինչպես նաև այդ առթիվ արտահայտում է իր կարծիքն ու հանձնարարականներ առաջարկում այդ մարմիններին:

3. Կոմիտեն Գլխավոր ասամբլեային ներկայացվող իր զեկույցում ընդգրկում է գանգատների ու Միավորված ազգերի կազմակերպության մարմիններից ստացված զեկույցների ամփոփումները, ինչպես նաև Կոմիտեի՝ նշված գանգատներին և զեկույցներին վերաբերող կարծիքն ու հանձնարարականները:

4. Կոմիտեն Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարից պահանջում է սույն Կոնվենցիայի 2-րդ կետի (ա) ենթակետում հիշատակված տարածքների վերաբերյալ Կոնվենցիայի նպատակներին առնչվող և նրա տրամադրության ներքո գտնվող ողջ տեղեկատվությունը:

Հոդված 16

Սույն Կոնվենցիայի՝ վեճերի կարգավորմանը կամ բողոքների քննարկմանը վերաբերող դրույթները կիրառվում են՝ առանց խոչընդոտելու խտրականության բնագավառում վեճերի կարգավորման կամ բողոքների քննարկման այլ ընթացակարգերի, որոնք սահմանված են Միավորված ազգերի կազմակերպության և նրա մասնագիտացված հաստատությունների հիմնարար փաստաթղթերում կամ նրանց կողմից ընդունված կոնվենցիաներում, և մասնակից պետություններին չեն խանգարում օգտագործելու վեճերի կարգավորման այլ ընթացակարգեր՝ ընդհանուր կամ նրանց միջև գործող հատուկ միջազգային համաձայնագրերին համապատասխան:

Մաս 3

Հոդված 17

1. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամ պետության կամ կազմակերպության մասնագիտացված հաստատությունների ցանկացած անդամի, Միջազգային դատարանի ստատուտի ցանկացած մասնակից պետության և ցանկացած այլ պետության համար, որը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից հրավիրվել է մասնակցելու սույն Կոնվենցիային:

2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Հոդված 18

1. Սույն Կոնվենցիան բաց է միանալու սույն Կոնվենցիայի 17-րդ հոդվածի 1-ին կետում նշված ցանկացած պետության համար:

2. Միանալը կատարվում է միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու միջոցով:

Հոդված 19

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում քսանյոթերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելուց հետո երեսուներորդ օրը:

2. Քսանյոթերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո սույն Կոնվենցիան վավերացրած կամ դրան միացած յուրաքանչյուր պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ պետության վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո երեսուներորդ օրը:

Հոդված 20

1. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարն ստանում և հանձնում է այն բոլոր պետություններին, որոնք են կամ կարող են դառնալ սույն Կոնվենցիայի մասնակիցներ, վավերացման կամ միանալու պահին արված վերապահումները: Վերապահման դեմ առարկող ցանկացած պետություն վերը նշված ծանուցման օրվանից սկսած իննսուն օրվա ընթացքում Գլխավոր քարտուղարին տեղեկացնում է այն մասին, որ ինքը չի ընդունում տվյալ վերապահումը:

2. Սույն Կոնվենցիայի նպատակների և խնդիրների հետ անհամատեղելի վերապահումներն անթույլատրելի են, անթույլատրելի են նաև այն վերապահումները, որոնք կարող են խոչընդոտել սույն Կոնվենցիայի հիման վրա ստեղծված որևէ մարմնի գործունեությանը: Վերապահումն անհամատեղելի կամ գործունեությանը խոչընդոտող է համարվում, եթե Կոնվենցիայի մասնակից պետությունների առնվազն երկու երրորդն առարկում է դրա դեմ:

3. Վերապահումները կարող են չեղյալ հայտարարվել ցանկացած ժամանակ, Գլխավոր քարտուղարին հղված համապատասխան ծանուցման միջոցով: Այդպիսի ծանուցումն ուժի մեջ է մտնում այն ստանալու օրը:

Հոդված 21

Յուրաքանչյուր մասնակից պետություն սույն Կոնվենցիան կարող է չեղյալ հայտարարել այդ մասին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ուղղված գրավոր ծանուցման միջոցով: Չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում այդ մասին Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումն ստանալու օրվանից մեկ տարի անց:

Հոդված 22

Սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ երկու կամ մի քանի մասնակիցների միջև ծագած ցանկացած վեճ, որը չի կարգավորվում բանակցությունների կամ սույն Կոնվենցիայում հատուկ նախատեսված ընթացակարգերի միջոցով, վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով հանձնվում է Միջազգային դատարանի լուծմանը, եթե վիճող կողմերը չեն պայմանավորվել կարգավորման այլ եղանակների շուրջ:

Հոդված 23

1. Սույն Կոնվենցիայի վերանայման մասին պահանջը կարող է ներկայացվել ցանկացած ժամանակ ցանկացած մասնակից պետության կողմից, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հղված գրավոր ծանուցման միջոցով:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը որոշում է, թե ինչ միջոցներ պետք է ձեռնարկել նման պահանջի կապակցությամբ, եթե այդպիսիներն անհրաժեշտ են:

Հոդված 24

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Կոնվենցիայի 17-րդ հոդվածի 1-ին կետում հիշատակված բոլոր պետություններին հաղորդում է հետևյալ տեղեկությունները.

(ա) 17-րդ և 18-րդ հոդվածներին համապատասխան ստորագրման, վավերացման և միանալու մասին,

(բ) սույն Կոնվենցիայի՝ 19-րդ հոդվածին համապատասխան ուժի մեջ մտնելու մասին,

(գ) 14, 20 և 23-րդ հոդվածներին համապատասխան ստացված հաղորդումների ու հայտարարությունների մասին,

(դ) 21-րդ հոդվածին համապատասխան չեղյալ հայտարարելու մասին:

Հոդված 25

1. Սույն Կոնվենցիան, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են, պահվում են Միավորված ազգերի կազմակերպության արխիվում:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Կոնվենցիայի հաստատված պատճեններն ուղարկում է Կոնվենցիայի 17-րդ հոդվածի 1-ին կետում հիշատակված կատեգորիաներից ցանկացածին պատկանող բոլոր պետություններին:

***Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հուլիսի 23-ից:**